# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 29.12.2025թ. N 576/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.01.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ջ.Աղաջանյանը, Ա.Նազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ք. Երևան, Ազատության-24/1)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | պլանավորված ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ | Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ | 68 068 850 | 20% | 81 682 620 | 81 683 496 |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն մասնակցի կողմից

որպես հայտի ապահովում ներկայացված «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 08⊠01⊠2026թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.327.26 բանկային երաշխիքում հայտի ապահովման վավեր լինելու ժամկետը չի համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին (հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր, սակայն մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման վավերականության ժամկետը սահմանվել է 90 (Իննսուն քսան) աշխատանքային օր՝ մինչև 25 հունիսի 2026թ. ներառյալ, որը կազմում է 106 աշխատանքային օր):

## 5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի հայտը մերժել, քանի որ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:
2. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած և սահմանել անգործության ժամկետ՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Զ.Աղաջանյան

Ա.Նազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան